

պատուիրեաց ժողով գումարեալ 'ի Միս, հրաւիրեալ զկաթողիկոսն Դաւիթ, եւ նա զեպիսկոպոսունս իւր, զվարդապետս եւ զվանահարս. եւ այս եղև առաջին յեկեղեցական ժողովս Ստոյ: Հաւանեցան հարքն՝ խնդրոց սպարապետին, եւ կանոնեալ ութ գլուխս բանից, զորոց ընդերկար գրեալ եւ պատմեալ էր Վանական վարդապետ, աշակերտ գլով յայնժամ Մխիթարայ Գոշի, եւ յորմէ համառօտէ Կիրակոս, առ որ եւ առաքենք զգիտասէրս, արտաքոյ դիտմանս համարելով զերկրորդէն աստանօր, եւ զոր ինչ 'ի սակս այնոցիկ ժողովք եղեն յարեւելս, 'ի Լօռի եւ յԱնի, եւ վէճք եւ հակառակութիւնք եւ երկպառակութիւնք, ոմանց հաւանել եւ այլոց ոչ, եւ Զաքարիայի՝ որ թագաւորական ունէր իշխանութիւն քան լոկ զօրապետութեան, կռիւլ զանհաւանսն եւ վարել յօտարութիւն, ըստ ոչ կամաց վարդապետին իւրոյ Մխիթարայ Գոշի: Այլ որ 'ի ճահ պատմութեանս՝ է այս, զի ըստ կանոնաց՝ գրեցին կաթողիկոսն Դաւիթ եւ Լեւոն՝ թուղթս, եւ առաքեցին 'ի ձեռն հրեշտակաց իւրեանց, պատշաճական նուիրօք: Աճապարեաց քան զնոսս խորագիտութեամբ՝ անկոչ «կաթողիկոսն Յովհաննէս՝ որ 'ի Հռոմկլայն, վասն ընդ միտ մտանելոյ իշխանացն արեւելից. առաքեաց վրան մի գմբէթարդ եկեղեցաձէ, եւ կազմողս եւ յօրինողս նմին, եւ սեղան մարմարեայ, եւ այլ սպասք պատարագաց. եւ եպիսկոպոս մի Մինաս անուն, եւ սարկաւագս եւ դպիրս եւ քահանայս եւ զեղեցկաձայն ասողս պատարագին. որք եկեալ եղեն յանդիման սպասալարին 'ի քաղաքն Լօռէ, եւ առաջի կացուցին նմա զհրամանս կաթողիկոսին եւ զթուղթ նորին եւ զընծայս»²⁰⁷:– Այսպիսի ոք էր Մեծաբարոյն այն, առաւել արդեօք վայելուչ յիշխանական՝ քան 'ի քահանայապետական բազմել յաթոռ. թէպէտ եւ յայնմ ժամանակի եւ վեհագոյնն 'ի քահանայապետս՝ առաւելեալն բազում բարեմասնութեամբք՝ վայելչագոյնս վարէր նովիմբ իշխանական ոգով:– Յիշեցաք զթղթակցութիւն սոցա կանխաւ, որոց վերջին ծանօթ մեզ է հրաւերն Իննովկենտեայ յամի 1213 առ սոյն Յովհաննէս, հանգոյն այլոց եպիսկոպոսապետաց եւ եպիսկոպոսաց գալ 'ի (Դ) ժողովն գումարելի 'ի Լուգոռն քաղաք աշխարհին Փռանկաց, վասն սահմանելոյ եւ պատրաստելոյ զխաչակրութիւն (Զ), որ եւ գումարեցաւ անդ յամի 1215 (11 նոյեմբ.), նախագահութեամբ Քահանայապետին, բայց ոչ յիշի թէ եւ 'ի Հայոց որ

²⁰⁷ Այս եւս բանք են նորին Կիրակոսի աշակերտին Վանականի: